

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԳԵՂԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ
«Ս. ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԳԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱՁԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇԻՆԻ
ՏԻԱՐ ԳԵՂԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻ
ՈՐ Ի ՓԱՐԻՁ. ՅՐԱՆԱՍ

Սրտի խոր գոհունակությամբ իմացանք Արևմտեան Եւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ և Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նազաչեանէն՝ Ձեր բացառիկ յանձնառութեանց, քանկազին ծառայութիւններու և նուիրումի մասին:

Անձնապէս մօտէն ծանօթ ենք Ձեզ և Մենք նույնպէս և նայմբան կարող ենք վկայել Ձեր հաստատական նուիրումութեան և անմնացորդ հաւատարմութեան մասին Հայաստանեայց Ա. Եկեղեցոյ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համդէպ:

Իբրև Փարիզի և Երջակայից Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Կրօնական Ընկերակցութեան Ներկայացուցչական Ժողովի բազմամեայ ատենապետ և Փարիզի Ա. Յովհաննէս Սկրտիչ Մայր Տաճարի Հոգաբարձութեան ատենապետ, Դուք Ձեր ժամանակի և էռանդի զգալի մասը մատաղ ըրած էք Ձեր ազգի և Եկեղեցոյ գոհասեղանին՝ ինքնաընծայման և ինքնազոռութեան գեղեցկագոյն մղումներով ու ապրումներով:

Փարիզի և շրջակայից մեր եկեղեցական համայնքը մեծապէս շահած և օգտուած է Ձեր մերկայութենէն և աշխատանքէն, և ցաւ պիտի լլլար Ձեզ մման հայորդեաց բացակայութիւնը մեր Եկեղեցոյ անդաստանէն ներս: Հազար փառք Աստուծոյ, որ իր շնորհներն անպակաս ըրած է մեր ազգէն:

Մենք երջանիկ հայրական սրտով մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները և այսու Հայրապետական Կոնդակա Ձեզի կը շնորհենք մեր բարբի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Չեզի պարզևէ քաջատողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին և արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր գոհողութեանց բարիքները:

Ռդջ լիբուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւետ օրինեալ ի Մենջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25 Մայիսի
Յամի Տեառն 1999 և ի բուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/238